ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՄԱՄԲՐԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ



Խորը ցավով հայտնում ենք, որ 2000 թ. դեկտեմբերի 30-ի գիշերը իր մենախցում կյանքից հեռացավ Մամբրե վարդապետ Մարգարյանը:

Հայր Սուրբը ծնվել է 1912 թ. Կեսարիայում: Չորս տարեկան հասակում կորցրել է ծնողներին և բախտի չարագույժ քմահաճույքով ընկել որբանոց (Բեյրութում)՝ իրեն բախտակից հարյուրավոր երեխաների հետ:

Ութ տարեկան հասակում որբանոցի ուսուցչի միջոցով Հայր Սուրբը կարողանում է գտնել իրենից չորս տարով մեծ եղբորը, որը մեկ այլ որբանոցում էր գտնվում: Տարիներ անց երկու եղբայրները նամակագրական կապ են հաստատում նաև իրենց քրոջ՝ Մարիամի հետ, որը մնացել էր Կեսարիայում՝ մի թուրք ընտանիքի խնամքին:

Չափահաս դառնալոց հետո, Հայր Սուրբը լքում է մանկատունը, տուն վարձում Բեյրութում, հյուսնություն անում՝ ապահովելու համար իր ապրուստը և օգնելու եղբոր նորաստեղծ ընտանիքին:

1932 թ. Հայր Սուրբը որոշում է նվիրվել հոգևոր կյանքին: Նա սովորում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում, ավարտում այն և անմնացորդ նվիրումով ծառայում միաբանությանը՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

1956 թ. օգոստոսի 12-ին Նազար Մարգարյանը ձեռնադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Մամբրե վարդապետ: Այդ օրը նա համարում է իր ծննդյան օրը:

1968 թ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով գալիս է Ս. Էջմիածին և անցնում ծառայության միաբանությունում, որպես փոխլուսարարապետ:

Մինչև իր կյանքի վերջը, որպես միաբանության անխոնջ մշակ, Հայր Սուրբը ծառայում է միաբանությանը՝ իր անձնական կենսակերպով օրինակ ծառայելով կրտսեր եղբայրներին, սիրով փոխանցելով նրանց իր իմացածը, սովորածը, հայրական վերաբերմունք ցուցաբերելով թե՛ կրտսեր հոգևորականներին, թե՛ ծանոթ ու անծանոթ աշխարհիկ մարդկանց:

Մ. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, Մայր Աթոռիս միաբանությունն ու պաշտոնեությունը իրենց խոր վշտակցությունն են հայտնում Հոգեշնորհ Հայր Սուրբի հարազատներին և անձանձրույթ աղոթքով հայցում Աստծո ողորմածությունը՝ Տ. Մամբրե վարդապետ Մարգարյանի անմահ հոգին Երկնային Արքայության լուսեղեն խորաններում հանգչեցնելու համար: